



ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ և ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, ԿԵՆՍԱԱՂԲԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Աղբը կամ թափոններն առաջանում են այն դեպքում, երբ մարդը դադարում է կառավարել իրեն համար ոչ պիտանի նյութական օբյեկտները (թափում է դրանք), և այդ օբյեկտները անցնում են ինքնակառավարման վիճակի, աղբն սկսում է դանդաղորեն քայքայվել աղտոտելով շրջակա միջավայրը:

Վրանգավոր թափոններն այն թափոններն են, որոնք վրանգավոր կամ վնասակար են մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար:

Կենցաղային աղբը ներառում է տնային տնտեսություններից առաջացած թափոնները (թուղթ և սրվարաթուղթ, ապակի, մեքաղներ, պլաստիկ, կենսաթափոններ, փայտանյութ, գործվածքներ, փաթեթավորում, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ, մարտկոցների և կուրակիչներ, ինչպես նաև խոշոր եզրաչափի թափոններ՝ ներառյալ կահույք և կենցաղային մեծածավալ իրեր): Առևտրից, շուկաներից, գրասենյակային շենքերից, կրթական հաստատություններից առաջացող նմանատիպ թափոնները (դպրոցներ, հիվանդանոցներ, պետական շենքեր և այլն) և փոքր բիզնեսից առաջացող թափոնները, ինչպես նաև բակերի և այգիների թափոնները (ներառյալ տերևները, կտրված խոտը և այլն) և ընտրված քաղաքային ծառայություններից առաջացող թափոնները (հանրային զբոսայգիներից և այգիներ, փողոցների մաքրման ծառայություններ, աղբի տարաների պարունակությունը) և մաքրման թափոնները կարող են կառավարվել, որպես կենցաղային աղբ:

Կենցաղային աղբի սահմանումը բացառում է՝ արտադրության, գյուղատնտեսության, անտառատնտեսության, խոտանման ենթակա մեքենաների թափոնները, ինչպես նաև շինարարական աշխատանքների, ձկնաբուծման, ջրի պարզարանների և կոյուղու ցանցերի արգասիքներ (ներառյալ կեղտաջրերի տիղմը) դրանք՝ արդյունաբերական թափոններ են:

Կենցաղային աղբի կառավարումը բաղկացած է հետևյալ փուլերից՝ թափոնների հավաքում, տեղափոխում, տեսակավորում կամ վերամշակում, օգտահանում և հեռացում: Կենցաղային աղբի և ընդհանրապես թափոնների կառավարման այս համակարգը կրում է հնգաստիճան «թափոնների հիերարխիա» անվանումը (Նկ.1)



Նկար 1. Թափոնների հիերարխիան

Վերամշակման ենթակա նյութերի որակը և արժեքը կարևորվում է, քանի որ դրանց հետագա մշակման արդյունավետությունը էապես կախված է սկզբնաղբյուրում (այն վայրերում, որտեղ դրանք առաջանում են) դրանց նախնական վիճակից և հետագա տեսակավորումից:

Երբ ապրանքները և նյութերը վերածվում են աղբի, վրանգավոր նյութերի առկայությունը կարող է այդ աղբը դարձնել ոչ պիտանի վերամշակման համար: Հետևաբար, անհրաժեշտ է տեսակավորման ժամանակ նվազեցնել կամ առանձնացնել վրանգավոր նյութերի պարունակությունը աղբի վերածված ապրանքներում ու նյութերում և ապահովել հատկապես շարք բարձր որակի նյութերի առկայության մասին բավարար տեղեկատվության հասանելիությունը աղբի ողջ կենսացիկլի ընթացքում:

Թղթի, պլաստիկի, ապակու, մետաղների թափոնները, գործվածքեղենը և կենսաթափոնները, ինչպես նաև վրանգավոր կենցաղային աղբը ենթակա են առանձին հավաքման և չպետք է խառնվեն այլ թափոնների կամ այլ նյութերի հետ, որոնք ունեն դրանցից փարբեր հատկություններ:

Կենսասաղբը կենսաքայքայվող մնացորդներն են, որոնք ստացվում են սննդի և խոհանոցային թափոններից, ինչպես նաև գրասենյակներից, ռեստորաններից, մեծածախ առևտրի կետերից, ճաշարաններից, սննդի վերամշակման գործարաններից: Դրանց կարող են գումարվել այգիների և զբոսապահների կանաչ զանգվածի թափոնները: Կենսասաղբը պետք է փարանջար հավաքվի՝ վերաօգտագործման և վերամշակման ծավալները մեծացնելու և չոր աղբի վերամշակվող նյութերի աղտոտումը կանխելու համար: Ավելին, կենսասաղբի փարանջար հավաքումն անհրաժեշտ է՝ բարձրորակ կոմպոստ ստանալու համար: Այն կարող է վերածվել կենսագազի աղբյուրի (QR 4.7.4):

Տարանջար հավաքման այս գործընթացը նպաստում է աղբի արդյունավետ վերամշակմանը:

Թափոնների հոսքերի այսպիսի կառավարումը կարևոր նշանակություն ունի աղբավայրերը թափոններից բեռնաթափելու և աղտոտվածությունը նվազեցնելու, արտադրանքներն ու նյութերը (իրենց ամենաբարձր արժեքով) շրջանառելու և շրջակա միջավայրը վերականգնելու համար:

Աղբի հավաքման և տեսակավորման գործընթացը ապահովում է դրա լիարժեք վերամշակումը, ստացված նյութերի հետագա օգտագործումը (թափոնը հումք է) և իրապես **հեռացման** (հիերարխիայի ամենաստորին աստիճանը) վիճակում հայտնված աղբի քանակի նվազումը:

Աղբի (թափոնների) առաջացումը կանխելու և դրանց պարզաձև կառավարումն ապահովելու համար պետք է իրականացնել շարունակական կրթություն և իրազեկում թափոնների հավաքման, փարանջարման, վերամշակման և դրանց հաջորդող գործողությունների վերաբերյալ: